

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՀՀՔԿ-ՔՄԱՇՁԲ-20/5-1

ք երևան

«25» օգոստոսի 2020թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Գրիգորյան Շին» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Գ. Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից (երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1 ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Աղբերքի Շատչրեքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք) իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են շինարարական աշխատանքների տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պայմանագրերն ուժի մեջ մտնելուց հետո և աշխատանքների ողջ ծավալով կատարման ժամկետ է սահմանվում 420 օրացուցային օրը

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 3):

1.4 Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների մեջ չեն հաշվարկվում

1.4.1 հեղինակային և/կամ տեխնիկական հսկողության պայմանագրերի լուծման դեպքում պայմանագրերի լուծման օրվանից մինչև նոր պայմանագրերի կնքման հաջորդող օրերի քանակը,

1.4.2 հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից համապատասխան եզրակացության դեպքում՝ եզրակացության մեջ նշված օրերի քանակը

2 ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3 ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Պատվիրատուն իրավունք ունի

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը առանց միջամտելու վերջինիս գործունեությանը

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները եթե

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը):

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2 Պատվիրատուն պարտավոր է

3.2.1 Աշխատանքը կատարելիս աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը) իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3 Կապալառուն իրավունք ունի

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4 Կապալառուն պարտավոր է

3.4.1 Աշխատանքներն ամբողջությամբ կատարել անձամբ պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով գործիքներով մեխանիզմներով ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան. կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման ջրամատակարարման կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար. ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին. Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Ապահովել պայմանագրի N 5 Հավելվածում (Աղյուսակներ N 1 և N 2) ներկայացված կապալի օբյեկտի դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4 ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն պոնտակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596 Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596 Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման ընդունման ավարտական արձանագրություն:

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5 ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 570 202 200 (հինգ հարյուր յոթանասուն միլիոն երկու հարյուր երկու հազար երկու հարյուր) ՀՀ դրամ որից 95 033 700 (իննսունհինգ միլիոն երեսուներեք հազար յոթ հարյուր) ՀՀ դրամը ԱԱՀ-ն, Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պատվիրատուն պայմանագրի ընդհանուր գնից մինչև 25% ի չափով կարող է փոխանցել Կապալառուի բանկային հաշվին որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում: Կանխավճարի չափը և տրամադրման ժամկետները որոշվում են Կապալառուի կողմից կատարման ենթակա աշխատանքների ու ձեռքբերվող նյութերի (այդ թվում սարքերի) ժամկետների վերաբերյալ Պատվիրատուին ներկայացվող գրավոր տեղեկատվության (հիմնավորման) առկայության դեպքում:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6 ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

¹ Վճարման ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

6.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ կատարման ենթակա սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3⁻ 3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու ինչպես նաև 3⁻ 4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք պայմանագրի 5⁻ կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ վճարման ենթակա սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7 ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՌԻՏԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը պետական մարմինների ակտերը և այլն որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8 ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8 5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ համաձայնագիր կնքելու միջոցով որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը.

8 6 Աշխատանքի կատարման ընդհանուր ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի ձեռքբերման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ընդհանուր ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ընդհանուր ժամկետը (420 օրացուցային օր) կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում բանկային երաշխիքների ձևով ներկայացրած ապահովումների ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթղթերի առկայությամբ)

8 7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8 8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8 9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8 10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8 11 Պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից՝ որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1 N 3 N 4 N 4 1 և N 5 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8 12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8 13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և


պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526 Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում. Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8 14 Որակավորման ապահովման գումարը նվազեցվում է, եթե առկա են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 26-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները:

9 ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02565827


Գլխավոր քարտուղար

(ստորագրություն)




ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

«Գրիգորյան Շին» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Էրեբունի, Մուշակյան Ճ/ի տ.92
«Հայթիզնեսքանկ» ՓԲԸ
Հ/Հ 115C014101961942
ՀՎՀՀ 00481595

Տնօրեն՝


(ստորագրություն) Գրիգորյան









ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

<< Գեղարքունիքի մարզի Գ. Աղբերքի Շատչրեքի միջնակարգ դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների կատարման

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
	1.1 Համաշինարարական աշխատանքներ				
	Հողային աշխատանքներ				
1	IV-րդ կարգի գրունտի մշակում 0 65 խմ շերտի տարողությամբ երկավատորով կողիցք	խմ	780	720	1 28* 600
2	Նույնը բարձելով ավտոմեքենաների վրա	խմ	575	720	414 000
3	Փոստրակի հատակի և կողերի վերջնական հարթեցում ձեռքով	խմ	60	4 050	243 000
4	Գրունտի ետլիցք հատակների տակ բուլդոզերով	խմ	1690	315	532 350
5	Գրունտի աստիճանաբար տոփանում օդաճնշական ձեռքի տոփանիչով	խմ	1690	225	380 250
6	Գրունտի ետլիցք հիմքերի ձոց ձեռքով տոփանումով	խմ	150	180	27 000
7	Ավելորդ գրունտի տեղափոխում 16 կմ հեռավորության վրա	խմ	575	1 080	621 000
	Ընդամենը հողային աշխատանքներ				3.499.200 0
	Ե/բետոնե կոնստրուկցիաներ 0.00 նիշից ցածր				
8	Բետոնե նախապատրաստական շերտի պատրաստում հիմքերի տակ B-7 5 դասի բետոնով	խմ	49 8	45 000	2 241 000
9	Բետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B-7 5 դասի բետոնով	խմ	4* 3	45 000	1 858 500
10	Շրջանակների միաձույլ ե/բետոնե հիմնային հեծանների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	287 95	73 800	21 250 710
11	Ամրան Փ8A240C	տն	7 121	311 400	2 217 479
12	Ամրան Փ16A500C	տն	5 572	306 000	1 705 124
13	Ամրան Փ18A500C	տն	4 442	306 000	1 359 130
14	Ամրան Փ25A500C	տն	0 115	306 000	35 251
15	Շրջանակների միաձույլ ե/բետոնե սյուների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	5 1	73 800	376 380
16	Ամրան Փ8A240C	տն	0 510	311 400	158 814
17	Ամրան Փ22A500C	տն	1 742	306 000	533.052
18	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ	տն	0 232	378 900	87 943
19	Միաձույլ ե/բետոնե պատերի պատրաստում 350մմ հաստ. B 20 դասի բետոնով	խմ	169 65	73 800	12 520 170
20	Ամրան Փ6, 8A240C	տն	1 452	311 400	452 184
21	Ամրան Փ10A500C	տն	2 599	306.000	795 294
22	Ամրան Փ12A500C	տն	8 407	306 000	2 572 511
23	Ամրան Փ16A500C	տն	0 431	306 000	131 764
24	Ամրան Փ22A500C	տն	1 325	306 000	405 572
25	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ	տն	0 238	378 900	89 989
26	Հատակի սալի ջրամեկուսացում իզոլամով	քմ	1470	1 530	2 249 100
27	Պատերի ջրամեկուսացում բիտումի մածիկով (2 անգամ)	քմ	310	1.440	446 400
	Ընդամենը Ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից ցածր				51 486 366 8
	Ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից բարձր				
28	Շրջանակների միաձույլ ե/բետոնե սյուների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	59 5	75 600	4 498.200



Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
29	Ամրան Փ8A240C	տն	2 341	311 400	728 984
30	Ամրան Փ16. Փ18A500C	տն	0 050	306 000	15 392
31	Ամրան Փ22A500C	տն	6 940	306 000	2,123.609
32	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ	տն	0 010	378 900	3 941
33	Շրջանակների միաձույլ ե/բետոնե միջուկների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	0 5	75 600	37.800
34	Ամրան Փ8A240C	տն	0 023	311 400	7 287
35	Ամրան Փ16. Փ18A500C	տն	0 051	306 000	15 667
36	Շրջանակների միաձույլ ե/բ պարզունակների պատրաստում մինչև 500մմ բարձրությամբ B 20 դասի բետոնով	խմ	10 20	75 600	771 120
37	Նույնը. մինչև 800մմ բարձրությամբ B-20 դասի բետոնով	խմ	123 42	75 600	9 330 552
38	Ամրան Փ6. 8A240	տն	3 220	311 400	1 002 848
39	Ամրան Փ8A500C	տն	0 643	311 400	200 137
40	Ամրան Փ12A500C	տն	1 797	306 000	549 931
41	Ամրան Փ16A500C	տն	1 497	306 000	457 929
42	Ամրան Փ18A500C	տն	4 019	306 000	1 229 845
43	Ամրան Փ25A500C	տն	0 092	306 000	28 213
44	Ամրան Փ28A500C	տն	0 744	306 000	227 633
45	Պողպատե թերթից ներդիրների տեղադրում	տն	0 190	378 900	71 991
46	Միաձույլ ե/բ գոտիների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	23 14	75.600	1.749.384
47	Ամրան Փ6. 8A240	տն	0 534	311 400	166 412
48	Ամրան Փ12A500C	տն	1 357	306.000	415 120
49	Ամրան Փ18A500C	տն	0 149	306 000	45 533
50	Դիաֆրագմաների պատրաստում 200մմ հաստության սևամեջ բետոնե քլոկներով	խմ	149 4	22 770	3 401.656
51	Նույնի բետոնացում. B-20 դասի բետոնով, ամրանավորումով	խմ	95 53	75 600	7 222 068
52	Ամրան Փ6. 8A240C	տն	0 724	311 400	225 538
53	Ամրան Փ10A500C	տն	8 657	306 000	2 649 164
54	Ամրան Փ12A500C	տն	7 041	306.000	2 154 424
55	Ամրան Փ16A500C	տն	1 002	306 000	306 490
56	Միաձույլ ե/բ բարավորների պատրաստում B-12.5 դասի բետոնով	խմ	1 63	67 500	110.025
57	Ամրան Փ6A240	տն	0 051	311.400	15 881
58	Ամրան Փ12A500C	տն	0 221	306 000	67 626
59	Միաձույլ ե/բետոնե ծածկի սալերի պատրաստում +3.3նիշի վրա B 20դասի բետոնով	խմ	186 5	75 600	14 099 400
60	Ամրան Փ6.8A240	տն	0 357	311 400	111 108
61	Ամրան Փ12A500C	տն	16 051	306 000	4 911 698
62	Ամրան Փ14A500C	տն	5 701	306 000	1 744 598
63	Ամրան Փ18A500C	տն	0 026	306 000	7 834
64	Միաձույլ ե/բ հեծանների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	6 80	75 600	514 080
65	Ամրան Փ8A240	տն	0 184	311 400	57 173
66	Ամրան Փ18A500C	տն	0 367	306 000	112 363
67	Միաձույլ ե/բ հովիարի պատրաստում +2.7նիշում B 20դասի բետոնով (սալ ՄՍ 1 + հեծան ՄՀ 1)	խմ	1 7	75 600	128 520
68	Ամրան Փ8A240	տն	0 029	311 400	8 937
69	Ամրան Փ8A500C	տն	0 073	311 400	22 670
70	Ամրան Փ12A500C	տն	0 008	306 000	2 448
71	Ամրան Փ16A500C	տն	0 046	306.000	14.076
72	Ամրան Փ18A500C	տն	0 015	306 000	4 590
73	Բետոնե աստիճանների պատրաստում 0 00 նիշից դեպի +0.45նիշ B-7.5 դասի բետոնով	խմ	2 3	31.050	71.415

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
74	ՄՍ 1 Աստիճանի միաձույլ ե/բետոնե սալի պատրաստում B-20 դասի բետոնով (+0 45նիշից դեպի +3.3նիշ)	խմ	1 9	75 600	143 640
75	Նույնի. բետոնե աստիճանների պատրաստում B 7,5 դասի բետոնով	խմ	0 5	30 600	15 300
76	Ամրան Փ8A240	տն	0 055	311 400	17 034
77	Ամրան Փ16A500C	տն	0 274	306 000	83 813
	Ընդամենը ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից բարձր				61.901.095 2
	Միջնորմներ				
78	Միջնորմների շարում 100մմ հաստ. սնամեջ բետոնե բլոկներով (ամրանավորումով)	քմ	397 58	2 700	1 073 466
79	Միջնորմների շարում 200մմ հաստության սնամեջ բետոնե բլոկներով	խմ	110 8	22 770	2 522 233
80	Ամրան Փ8A500C	տն	2 760	311 400	859 334
	Ընդամենը միջնորմներ				4.455 032 7
	Դռներ և պատուհաններ				
81	Ալյումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն արտաին դռներ	քմ	36 31	60 930	2 212 222
82	Ալյումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-5 արտաքին վիտրաժի բացվող մաս(դուռ)	քմ	1 92	60 930	116 986
83	Ալյումինե ապակեփաթեթով ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-4 արտաքին վիտրաժի բացվող մաս (պատուհան)	քմ	1 20	60 930	73 116
84	Ալյումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով մուգ մոխրագույն, V-3-- V-5 արտաքին վիտրաժների չբացվող (խույ) մաս	քմ	17 04	35 640	607 306
85	Մետաղապլաստե, 1շերտ 4մմ հաստ ապակիով V-1 ներքին վիտրաժի բացվող մաս (դուռ)	քմ	2 30	31 500	72 576
86	Մետաղապլաստե, 1շերտ 4մմ հաստ, ապակիով V-1 ներքին վիտրաժի չբացվող (խույ) մաս և V-2 խույ վիտրաժ	քմ	25 0	27 000	675 810
87	Ներքին, ազակեպատ, երկզույնանի մեկփեղկանի դռներ՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից փայտից, միջուկը պենոպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1.5մմ հաստությամբ ՊՎԲ Դ-1	հատ	9	63 900	575 100
88	Ներքին, խույ, մուգ մոխրագույն մեկփեղկանի դռներ՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից միջուկը պենոպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1.5մմ հաստությամբ ՊՎԲ Դ-2.....Դ-3	հատ	41	61 200	2 509 200
89	Ներքին երկփեղկանի դռներ (массивный портал)՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենոպոլիստիրոլ, երեսապատման շերտը 1.5մմ հաստությամբ ՊՎԲ Դ-4 . Դ-4*	հատ	4	108 000	432 000
90	Մետաղական, խույ, մուգ մոխրագույն դռան տեղադրում Դ-5	քմ	1 7	55 800	94 882
91	Մետաղական դռան երկշերտ յուրաներկում, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	քմ	3 4	2 070	7 038
92	Մետաղապլաստե ներքին դռներ Դ-6	քմ	5 3	31 500	165 463
93	Սանհանգույցի էկրանների տեղադրում	քմ	12 6	34 200	430 920
94	Մետաղապլաստե, ապակեփաթեթով, մուգ մոխրագույն բացվող պատուհաններ	քմ	89 3	30.600	2.732.886
95	Մետաղապլաստե, ապակեփաթեթով, մուգ մոխրագույն չբացվող պատուհաններ	քմ	64 2	26.100	1.674.889
96	Մետաղապլաստե, բաց մոխրագույն, պատուհանագոգերի տեղադրում 200մմ լայնությամբ	գծմ	80 1	2 790	223 367
	Ընդամենը դռներ և պատուհաններ				12 603 761 4
	Հատակներ				
97	Հողի տրփանում խճաքարով	քմ	1480	450	666.000
98	Ամրանավորված բետոնե շերտ 150մմ հաստությամբ B-12,5 դասի բետոնից	խմ	222 0	67 500	14 985 000
99	Նույնի ամրանավորում Փ10A500C դասի ամրանային ցանցով (8 Յկգ/քմ)	տն	12 3	306 000	3 758 904
100	Խարամաբետոն 45մմ հաստ, B-12,5դասի թեթև բետոնով	քմ	1644 6	1 620	2 664 187
101	Ջրամեկուսիչ շերտի պատրաստում իզոլից 1 շերտ, քիտումի մածուկի վրա	քմ	1447 8	1 800	2 606.004
102	Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 25մմ հաստ	քմ	540 46	990	535.055
103	Ցեմենտ ավազե հարթեցնող շերտ 30մմ հաստ	քմ	1104 *	1 305	1 440.85*

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
104	Մամլագրանիտ (նվազագույնը 10մմ հաստությամբ) սալերով հատալի երեսապատում. սոսնձումով	քմ	417 12	12 150	5 068 008
105	Մամլագրանիտ (նվազագույնը 10մմ հաստությամբ) սալերով աստիճանների երեսապատում	քմ	16 71	12 150	203 027
106	Նոյնի. ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 25մմ հաստ.	քմ	16 71	990	16.543
107	Շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ մամլագրանիտ սալերով	զծմ	171 8	28 800	4 947 840
108	Խեցեսալերով (նվազագույնը 8մմ հաստ) հատալի երեսապատում, սոսնձումով	քմ	123 34	9 270	1 143 362
109	Նոյնի շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ	զծմ	80 1	20 700	1 657 863
110	Վինիլային (հետերոգեն ՊՎԶ 2մմ հաստ. 0.7մմ հաստ. պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում. ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	768 453	8 100	6 224 468
111	Վինիլային (հետերոգեն սպորտային ՊՎԶ 4 5մմ հաստ. 1մմ հաստ. հոմոգեն պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում. ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=100մմ շրիշակների մակերեսը)	քմ	257 435	8 100	2 085 225
112	Կավրոլինից (4.5մմ հաստ. պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	116 8	4 950	578 160
113	Ցեմենտե հատակների պատրաստում 30մմ հաստ (շրիշակների պատրաստումով)	քմ	34 32	1 305	44 788
	Ընդամենը հատակներ				48 625 283 7
	Տանիք				
114	Ֆ-1 Մետաղական ֆերմանների մոնտաժում պողպատե քառանկյուն խողովակներից	տն	3 681	639 000	2 352 031
115	Նէ-6 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ 250x250x10մմ. ամրան Փ12A500C)	տն	0 181	405 900	73 426
116	Մետաղական ֆերմանների կապերի մոնտաժում ուղղանկյուն պողպատե խողովակներից	տն	6 616	639 000	4 227 624
117	Նէ-7---Նէ-10 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ 8մմ հաստ. ամրան Փ12A500C)	տն	0 196	405 900	79.464
118	Տանիքի մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում պողպատե ուղղանկյուն խողովակներից (սյուներ, պարզունակներ)	տն	16 043	639 000	10 251 477
119	Նէ-7---Նէ-10 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ անկյունակ. ամրան Փ8A500C)	տն	1 137	405 900	461 307
120	Մետաղական տարրերի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	27 853	99 000	2 757 444
121	Մետաղական մակերեսների պատում հրդեհակայուն ներկով	քմ	1182 7	3.240	3 832 005
122	Տանիքի փայտյա կոնստրուկցիաների տեղադրում, մշակված հակասեպտիկ նյութով (ծպեղ. կավարամած)	խմ	30 9	238 500	7 369 650
123	Նոյնի երեսում (տակից) ՕՇՍ - սալերով (оринетированно-стружечная плита) 10մմ հաստ.	քմ	1540 1	5 400	8 316 540
124	Գոլորշամեկուսիչ շերտի փոռում	քմ	1540 1	1 350	2 079 135
125	Ջերմամեկուսիչ շերտի իրականացում 100 մմ հաստ երկշերտ (վերին շերտը 15մմ. ստորինը 85մմ հաստ) չայրվող բազալտե հանքաքարաբակ սալերով	քմ	1540 1	2 160	3 326 616
126	ՕՇՍ սալերի տեղադրում 10մմ հաստ. (քիտումային կղմինդրի հիմնատակ)	քմ	1781 1	5 400	9 617 940
127	Բիտումային կղմինդրի ծածկույթի իրականացում (մոդիֆիկացված քիտում 1,3կգ/քմ պարունակությամբ. երաշխիքային ժամկետը 40տարի)	քմ	1781 1	8.550	15 228.405
128	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանում	խմ	30 9	7 650	236 385
129	ՕՇՍ սալի մասնակի լաքապատում	քմ	297 2	1 620	481 432
130	Ջրհորդանների պատրաստում 0 5մմ հաստ ցինկապատ թիթեղից. զոնավոր ներկվածքով	զծմ	136 5	5 580	761 670
131	Ջրընդունիչ ձագարների տեղադրում Փ150մմ	հատ	15	2.070	31 050
132	Ջրիտս խողովակների տեղադրում 150x150մմ	զծմ	76 18	7 650	582 777

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափ միավոր	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
133	Էվակուացիոն աստիճանների մոնտաժում	տն	0 707	639 000	451 773
134	Նույնի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	0 707	99 000	69 993
	Ընդամենը տանիք				72 588 143 6
	Հարդարման աշխատանքներ				
135	Պատերի բարձրորակ սվաղ գաջի շաղախով	քմ	2484 24	2 070	5 142 377
136	Պատերի բարելավված սվաղ գաջի շաղախով	քմ	313 02	2 070	647.951
137	Դռների եւ պատուհանների շեպերի սվաղ գաջի շաղախով	քմ	10 13	3 420	34 651
138	V-2, V-4, V-5 վիտրամների վերևի մասի լցման համար հարթասալերով	քմ	12 9	5 400	69 660
139	Առաստաղների բարձրորակ սվաղ գաջի շաղախով	քմ	89 67	2 070	1 845 757
140	Առաստաղների բարելավված սվաղ գաջի շաղախով	քմ	98 22	2 070	203 3 5
141	Պատերի բարձրորակ ներկում լատեքսային ներկով	քմ	2516 2	2 790	7 020 176
142	Պատերի բարելավված ներկում լատեքսային ներկով	քմ	313 02	2 790	873 326
143	Առաստաղների բարձրորակ ներկում լատեքսային ներկով	քմ	1316 39	2 790	3 672 728
144	Առաստաղների բարելավված ներկում լատեքսային ներկով	քմ	43 04	2 790	120 082
145	Պատերի բարձրորակ սվաղ ցեմենտ-ավազե շաղախով	քմ	364 66	1 7 0	623 569
146	Պատերի երեսապատում կերամիկական սալիկներով	քմ	301 16	8 100	2 439 396
147	Կախովի առաստաղ գիպսատվարաթղթե հարթասալերով 9.5մմ հաստությամբ, ստատների տեղադրումով	քմ	424 72	5 400	2 293 488
148	Ներքին գույքային տախտակամածի տեղադրում և քանդում	քմ հորիզոնական	332	1 440	478 080
149	Կախովի առաստաղների պատրաստում պլաստիկ սալերով САЙДИНГ	քմ	55 18	4 500	248 310
150	Ողղանկյուն պողպատե խողովակներից բազրիքների մոնտաժում	տն	0 593	639 000	378,845
151	Նույնի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	0 593	99 000	58 694
	Ընդամենը հարդարման աշխատանքներ				26 150 405 3
	Արտաքին աստիճաններ, թեքահարթակներ				
152	Խամքարե զանգվածի պատրաստում աստիճանների և թեքահարթակների տակ	խմ	11 6	5 580	64 728
153	Միաձույլ բետոնե պատերի պատրաստում B-7 5 դասի բետոնով	խմ	9 5	31 500	299 250
154	Բետոնե աստիճանների և թեքահարթակների պատրաստում B-7.5 դասի բետոնով	խմ	8 4	31 500	264 600
155	Աստիճանների երեսապատում 50մմ հաստ բազալտե սալերով	քմ	9 72	18 000	174 960
156	Հարթակների և աստիճանաճակատների երեսապատում 30մմ հաստ բազալտե սալերով	քմ	48 11	15 300	736 083
